

Կ. Գ. ՉԱԼԻԿՅԱՆ

ԱՌԱՋԻՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԿՈՂՄ
ԶԱՅՆԵՂԱՍԱԿԻՆԵՐԻ
ԿԱՐՈՒԹՎԱԾԸՆ ՈՒ ԽԱՋԱՅԻ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԵՐԸ



ВЫЧИСЛИТЕЛЬНЫЙ ЦЕНТР
АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР И
ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

К. Г. ЧАЛИКЯН

СТРУКТУРА ПЕРВОГО И ПЕРВОГО
ПОБОЧНОГО ГЛАСОВ И ВОПРОСЫ
ХАЗОВОЙ СИСТЕМЫ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНС. ССР
ЕРЕВАН 1981

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀԱՅՎՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կ. Գ. ՉԱԼԻԿՅԱՆ

ԱՌԱՋԻՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԿՈՂՄ
ԶԱՅՆԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԿԱԽՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ
ԽԱԶԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ

1981

78 Apr1 հնդեքս ԳՄԴ 85. 2 (2z) 1

2 158

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ և Նրեանի պետական համալսարանի
հաշվողական կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ արվեստագիտության թեկնածու
Բ.Մ.ՄԱԶՄԱՆՅԱՆ

Գիրքը հրատարակության է երաշխավորել գրախոս՝
արվեստագիտության թեկնածու հ.գ. ՏԻԳՐԱՆՈՎԱՆ

ԶԱԼԻԿԹԱՆ, Կ.Գ.

2 153 Առաջին և առաջին կողմ ժայնեղանակների կառուց-
վածքն ու խազային համակարգի հարցերը /Պատ. խմբ.
Բ.Մ.Մազմանյան. -Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981.-336-էջ.

Մենագրության մեջ հետազոտվում են հայոց լեզվի
ինտոնացիոն օրինաչափություններն ու նրանց կապը
առաջին և առաջին կողմ ժայնեղանակների կառուցվածքի
հետ։ Հեղինակը վերլուծում է այդ ժայնեղանակներում
գտնվող շարականների խազային գրվածքների արտաքին
տվյալները։ Աշխատանքում փորձ է արվում վերծննելու
առաջին և առաջին կողմ շարականների պարզագույն մասը։

Գիրքը նախատեսվում է երաժշտագետների համար։

2 4905000000
708 (02)-81 ----- 58-81

78 Apr1
ԳՄԴ 85.2 (2z) 1

© Հայկական ԱՍՀ ԳԱ հրատարակչություն, 1981

ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՂՄԻՑ

Հայ ժողովրդի հոգևոր մշակույթի ժառանգության նշանակալի մասն է կազմում միջնադարյան երաժշտությունը, որը մասամբ մեզ հասել է՝ բանավոր փոխանցումների շնորհիվ, ենթարկվելով փոփոխությունների և ժամանակի ավերածություններին:

Հարյուրավոր ժեռագրերով մեզ են հասել նաև միջնադարյան տասնյակ հայ երգահանների ստեղծագործությունների ընագրերը՝ գրված խազային նոտագրությամբ, որը 15-16-րդ դարերից դադարել է կիրառվելուց և ապա կորստյան մատնվել:

Մեր օրերում, երբ արժեքավորվում են հարերի ընթացքում ժողովուրդների ստեղծած մշակութային գանձերը, որոնք հիմք են հանդիսանում նորագույն արվեստների զարգացման համար, հատուկ նշանակություն է ստանում խազային նոտագրության վերծանման խնդիրը, որի լուծումով կը ացանցայտվի մեր ողջ երաժշտական անցյալի էությունը: Եվ պատճենական չէ, որ վերջին տարիներին, թացի երաժշտագետներից, այս հարցի վրա է սկսվել նաև այլ մասնագիտության տեղ մտավորականների ուշադրությունը ևս:

,Առաջին և առաջին կողմ ճայնեղանակների կառուցվածքն ու խազային համակարգի հարցերը,, մենագրությունը Հայկական ՍՍՀ

ԳԱ և Երևանի պետական համալսարանի գիտ.աշխատող Կարո Զալիկ-
յանի խազաբանական ուսումնասիրությունների և Նրա վերջին 7
տարիների հաշվետվությունների ամփոփումն է:

Իր տեսական ըմբռնումները ընդհանրացնելով Կոմիտասի, Ռ.
Աթայանի և Ն.Թահմիզյանի խազաբանական դրույթների հետ, Կ.Զա-
լիկյանը փորձում է բացահայտել 24 պարզագույն խազերի իմաստը
և վերծանել դրանց կիրառմամբ ստեղծված 179 պարզ շարականների
մեղեդին:

Առաջին կողմ ճայնեղանակ շարականների վերծանությունը
փորձարկված է նաև Էլեկտրոնային հաշվիչ մեքենայի միջոցով, որի
ծրագրավորումը կատարել է մաթեմատիկոս Մ.Համբարձումյանը:

ՆԵՐԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայկական խազային նոտագրության առեղծվածը լուծելու համար անհրաժեշտ է քացանայտել այն նախահմբը, որի վրա խարսխված է տվյալ համակարգը:

Խազային նոտագրությամբ գրի է առնված հայկական մասնագիտացված երաժշտության ողջ ժառանգությունը, որը, կառուցվածքի տեսակետից, քաժանվում է երկու համակարգի. ա/ տարրական, բ/ըազմատարր:

Տարրական համակարգը խիստ ճայնեղանակային է, և նրան է պատկանում ողջ Շարակնոցը: Այս համակարգում հիմնավորվում է հայկական երաժշտության գոված լեզուն, որն արտահայտում է հայոց ութայնի կառուցվածքային բոլոր օրենքները: Բազմատարր համակարգն ընդգրկում է մանրուսման երաժշտությունը: Մը հորինվածքներում առկա են մեղեղիական ընտպրձակ ծավալումները, որոնք իրականացված են տարրական համակարգի տարրեր տարրերի ու երկույթների խշացման և ազատ հորինվածքային կիրառման սկզբունքով:

Բազմատարր երաժշտության օրենքները քացանայտելու համար նախ հարկավոր է հստակորեն ձևակերպել տարրական երաժշտության օրենքները, իսկ մանրուսման խազերի վերծանությանը կարելի է անցնել միայն Շարակնոցի խազերի վերծանման օրենքները լիովին հիմնավորելուց հետո:

Հայկական երաժշտությունը ի ընե ծայնեղանակային է, այսինքն՝ նրա համակարգում գոյություն ունի հիմնական կամ կենտրոնական մի դրսություն, որտեղ լուծվել և կայունացել են երաժշտական կառուցվածքի ու արխիտեկտոնիկայի հիմունքները, որն իջրև մտածողություն տարածվել է երաժշտական ողջ Վերնաշենքի վրա:

Հայոց ութձայնի համակարգում ինտոնացիոն տիպարների կազմակորման, ապա Խունկցիոնալ կենտրոնների հանդեպ ունեցած դիրքորոշման տեսակետից, իջրև արմատական երևույթ հանդես է գալիս առաջին ծայնեղանակը, որի մեջ են ամփոփված հայկական ութձայնի կառուցման նախնական տարրերը: Պատահական չէ, որ այդ ծայնեղանակը որպես „առաջին,, է մկրտվել այնպիսի քազմեղանակ ծայնային շինարարության մեջ, ինչպիսին շարականների քազմանյուղ համակարգն է:

Հայտնի է, որ ամեն մի երաժշտական համակարգ սկիզբ է առնոմ տվյալ ազգի խոսակցական լեզվի ինտոնացիոն օրինաչափություններից: Հայոց երաժշտությունը ունի յուրօրինակ քերականություն, որը հայերեն քերականության անդրադարձած պատկերն է ծայնաստիճանային դրությամբ: Պատահական չէ, որ քերականությունը միջնադարում դիմվել է իջրև „Դուռն և քանալի ամենայն իմաստափրութեանց,, Մագիստրոսի դիպուկ քնութագրմամբ,, Քերականութեամբս մտանել յամենայն արհեստ իմաստափրութեան պարտ է,,¹:

Հայ քերականական համակարգը քազմից մեկնարաննել են միջնադարյան իմաստունները, լուսաբաննել են արդի գիտնականները, բայց երաժշտական քերականությունը մասնակի է արտացոլվել քերականական մեկնություններում: Այս կարևորագույն հարցի իմաստավորմանը անդրադարձել է միայն Կոմիտասը, թեև նրա տեսությունից մեզ հասած

¹ Խասյի Նշեցի, Վերլուծութիւն քերականութեան, աշխատափրությամբ՝ Լ. Խաչերյանի, Երևան, 1966, էջ 6:

Փշրանքներն ու . , Հայ. եկեղեցական երաժշտություն,, հոդվածը՝ իր տեսական վիթխարի Նշանակությամբ հանդերձ, լրիվ և խորացված չեն թագահայտում նյութը:

Առանց հիմնավորելու երաժշտական քերականության համակարգը, որի վրա և խարսխված է խազային համակարգը, անհնարին է պատկերաց- նել ձայնեղանակային երաժշտության ակունքներն ու հունը:

Քերականագիտական մեկնություններում ու վերլուծություննե- րում , , Յաղագ վերծանութեան, , , , Յաղագ կիտի, , , , Յաղագ առողանութեան, , , , Յաղագ ոլորակի, , և նմանօրինակ այլ գլուխ- ներում քերական մեկնիչները հանգամանութեն քացարում են արտասա- նական ծավալումների կառուցվածքային, պատկանակոր /ֆունկցիոնալ/ և գեղակերտման /պլաստիկ/ միջոցները, երբեմն անզնելով երաժշտա- գիտության սահմանները: Ըստ քերականների, ողջ ինտոնացիոն համա- կարգի ծշգրիտ և շնորհալի հնչափորություն է երեք գործոնների, որոնք են- ա/ արորհություն, թ/ առողանություն, զ/ ենթադատությունը: , , Վեր- ծանութիւն է մասն քերդածաց կամ շարագրաց անվթար յառաջեթութիւն- Ասէ յորթամ. ընթեռությունը գերդածան ուրուց կամ գշարագրածս անվթ- թար, այսինքն՝ անսխալ և անվեպ յառաջեթութիւն առաջի լսողաց, Վերծանութիւն՝ , , զբնթերցումն, , կոչէ, և քերդած՝ , , գշափոյ ըանս, , , իսկ շարագրաց՝ , , զպատմագրականս, : Եւ յետ ասելոյն զայս ցուցանէ և զո՞ ծառի վերծանութեանն ըստ երից յեղանակաց: 2 Եւ վերծանելի է՝ ըստ ենթադատութեան, ըստ առողանութեան, ըստ որո՞նութեանս, :

Առաջին ճայնեղանակի լադա-ինտոնացիոն շենքը նույնպես են- թարկվում է համանման տարրալուման. ա/ հնչյունաշարի ծևակորումը ըստ որո՞նության, թ/ ճայնաստիթանների հիմնումն ու նրանց կապակ-

2 Եսայի նշեցի, նույնը, էջ 69:

գումաները շեշտադրական քանաձեւերով ըստ առողջանության, զ/ երաժշտական մտքի կառուցումը ֆունկցիոնալ դրությամբ, որն իր մեջ ներառում է նաև տրոհական և առողանական տեսակները՝ ըստ ենթադրության։ , քանզի յենթադրութենէն՝ զգաւրութիւնն, յառողանութենէն՝ զարուեստն, իսկ ի տրոհութենէն զպարունակ միտսն տեսանեմք, ,⁹:

9 Վարդան Արեւելցի, Մեկնութիւն քերականի, Երևան, 1972,
էջ 77:


Խոսակզական և երաժշտական մտքերի ընդհանուր գանգվածի բաժանումը առանձին մասերի՝ վերջակետի, միջակետի և ստորակետի միջոցով, կոչվում է տրոհություն։ Հնչյունավորման և ճայներանգման միջոցով նախադասության ամփոփ մտքի արտաքերումը՝ առովասացությունը, հանդես կցա արտահայտչականորեն լարգավորված ամբողջությամբ, եթե նա հիմնված է տրոհության համակարգի վրա։ Արտասանության ինտոնացիոն ռջիչներից կազմավորվող երաժշտական նախադիպարների հարցում կարևոր դեր են կատարում տրոհության հնարանքները, որոնք ծայնի ելեւջների և դադարների շնորհիվ ստեղծում են դիատոն երաժշտական կարգի հիմունքները։ Տրոհության համակարգի ազդեցությամբ՝ ինտոնացիոն կերպարները փոխադարձաբար որոշակիանում են և հնարակորություն ստանում շարանյուսվելու, տոաջացնելով տվյալ երաժշտական համակարգի տրամախոհության /արխիտեկտոնիկայի/ հիմունքները։ Տրոհության երեք քաղաքորչների՝ վերջակետի, միջակետի և ստորակետի շնորհիվ առաջանում են այն սկզբունքները, որոնց վրա հիմնվում և զարգանում են հայ երաժշտության կառուցման նախնական տարրերն ու եղևոյթները։

Տրոհության համակարգի կերպվածքը առնվում է հայկական երաժշտության հնչյունաշարերի կառուցման սկզբունքների ու առանձնահատկությունների հետ։ Տրոհության երեք գործոնների զորությամբ ստեղծվում է քաղաքորյալ մի օղակ, որի քաջմագաղակումով կազմվում է ողջ հնչյունաշարային շղթան։ Այդ օղակը մաժոր քառալարն է, որը հայտնաբերել է Կոմիտասը։ „Հայլական ժողովրդական և եկեղեցական երաժշտությունը հիմնված է ոչ թե եկեղեցական ութնյակի սիստեմի վրա, այլ քառալարի սիստեմի վրա՝ այնպես, որ նախորդ քառյակի վեր-

Թին ճայնը դասում է նաջորդի առաջին ճայնը: Հայ երաժշտության տիրող քառյակը մաժոր քառյակն է, որի սկզբի և վերջի ճայները միշտ անփոփոխ են մնում, մինչեռ միջինները փոփոխում են, ⁴:

Մաժոր քառյակի հիմնումը և նրա մասնատումը քառալարի կատարվում է տրոհության միջոցով, որովհետև ստորակետի, միջակետի և վերջակետի արժեքները հաստատվում են քառալարի համապատասխան հանգույցներում և ձևավորում են ճայնամիջոցներն ու ճայնաստիճանները: Տրոհման երկույթը իրենից ներկայացնում է ինտոնացիոն ընթացք, որն սպառվում է տրոհության ավարտով, հետևաքար, նա որոշվում է ոչ միայն այն ճայնաստիճանով, որին հանգում է տրոհումը, այլև այն ճայնամիջոցներով, որոնցով ընթանում է տրոհությունը:

1. Վերջակետի մեավորումով ամփոփում է մաժոր քառալարը, իսկ բուն վերջակետին համապատասխանում է նրա վերջին /չորրորդ/ աստիճանի հաստատումը: Քառալարի ստորին ճայնամիջոցը հիմնում է ստորակետը, ստեղծելով տուաջին աստիճանը, միջինը՝ միջակետը, ստեղծելով երկրորդ և երրորդ աստիճանները:



Բացահայտելով տրոհության նշանների ինտոնացիոն գաղափարը, միջնաղայան քերականները գլխավոր դերը հատկացնում են վերջակետին, որն ունի բացարձակ արժեք, իսկ մյուս երկումին վերագրում են հարաբերական արժեքներ, ըստ վերջակետի դիրքորոշման:

4 Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Սրբան, 1941, էջ 159:

, Այժմ քաղայայտութիւն առնէ նախասացեալ անուանց կիտին և կառարի ամենայն տրամախոնութիւն, այսինքն՝ իմացուած քանի երիւը կիտիւը, որոց տուչինն՝ ստորակէտ, և միջինն՝ միջակ, և վերջինն՝ որ և առաջին ասէ իմաստասէրս սակս պատուոյ՝ աւարտեալ կէտ, որ նոյն ինքն ասի և տուն, ⁵: „հսկ զի՞ ասադ՝ զիւրաքանչիւր ոք ի կիտիցն յառաջագոյն արուեստիւն: – Նախ, զի սահմանաւ զիւրաքանչիւրոց ընութիւնն ծանուսցէ. երկրորդ՝ զի տեղաւն և ձայնիւն՝ զաւարտեալ կէտն իբրև զարբայ, իսկ զերկուսն՝ իբրև զծառայս նորին, աւրինակ իմն զնուազեալն և զառաւելեալն այնոքիւը նշանակութեամբ, իսկ զչափաւորսն՝ յստակ, ⁶:

Վերջակետի, միջակետի և ստորակետի ինտոնացիաները հասնելով համապատասխան ժայնոստիմանի, հայնի երկարադումով հապաղեցնում են այն: Այդ հապաղումները /քաղաքոր/ տարօրեր շափերի են, որոնցից ամենաերկարը և կայունը նույնպես վերջակետին է պատկանում: „հսկ ասելն՝ զի ի կէտէն կարի յոյժ մեծ է քացան, իսկ ի ստորակիտէն՝ ամենակին նուազ. քազատ ասէ զվերջին կէտն, իսկ կէտ՝ զմիջինն՝ ոչ աւարտեալն, որ լինի ի շարադրութեան ըանիդ այսպէս՝ ի յաւարտմանէ խորհրդոյն կարի յոյժ հեռի է միջակիտին ըան լասն միջասահմանին, զի ինքնըստինքեան միջակէտն ոչ կարէ յայտնել զիորհուրդն, իսկ ստորակիտին՝ նուազ, զի հուպ է ի յաւարտեալ կէտն. քանզի յաւարտեալ կէտն հասանելով ի կարգի շարժմանն լինի քացերկութիւն քանին: Եւ արդ եղից զաւրինակ զաւրութեան նոցա, ստորակէտն՝ նախերգան է, իսկ միջակն՝ պատմառ, իսկ աւարտն՝ խոստումն կամ վը-միո, ⁷:

„Զայ եկեղեցական երաժշտություն, հողվածում Կոմիտասը գուցադրում է վերջակետին համապատասխանող 19 հանգամե, որոնք կիրառ-

5 Խաայի Նշեցի, Վերլուծութիւն քերականութեան, աշխատասիրություն, 1.Խաայի 1966, էջ 78:

6 Հովհաննես Երզնկացի, անտիպ աշխատասիրություն 1.Խաայի 1966, էջ 166:

7 Խաայի Նշեցի, Նույնը, էջ 78:

վում են սաղմոսերգության և թվերգության մեջ կազմ, երկար և ընդարձակ վերջավորությունների համար: Այդ և նմանօրինակ քազմաթիվ այլ հանգանեներ ստեղծվում են մի քանի քանաձևերի հիման վրա, որոնց ընույթին է ճպտող տոների լուծումը մաժոր քառալարի չորրորդ աստիճանի մեջ:



2. Ստորակետի միջոցով նախադասության ամփոփ միտքը քաժանվում է մասերի, որոնցից յուրաքանչյուրի հնչավորումը տոանձին միավոր է և անզոր է իրենով պարփակելու ավարտուն միտքը.,,և դնէ զկէտն, որ կոչի ստորակէտ, որ ունի տկարութիւն յանզման մտածութեանն,,⁸:

Ստորակետով անջատիած նախադասության տվյալ ենթամասի միտքը հնարավոր է եզրափակել միայն մյուս երկու կետերով հանդես եկող մասերի միջոցով: ,,հսկ ասելն՝ թէ ստորակէտ է տրամախնին չեւ ևս անգեցելոյ, այլ այլ ևս կարաւտացելոյ. - զայս զառաջին կիտէն ասէ: հսկ տրամախնին չեւ ևս անգեցելոյ, այսինքն՝ ըստ նորհրդյն չեւ ևս կատարեալ, որ է ենթադատութիւն, այլ քազում կարաւտութիւն ունի առ ի վախճանել զերկուս ևս հետագայ կէտս,,⁹:

Պարզ նախադասությամբ կամ խոսքի մասով արտահայտվող միավորները դեպի ստորակետը ընթանալիս ծայնաստիճանն իշեցնում են մինչև

⁸ Հ.Միհիթարյան, Հայերենի կետադրության համառոտ պատմություն, Երևան, 1972, էջ 41:

⁹ Հովհաննես Նրգնկացի, Խույնը, էջ 164:

Ընդհանուր ճայնածավալի սպորտոց, մասամբ սպառում ճայնումը, հապաղում անորոշաքար՝ ենթարելով շարունակությունը ըստ հաջորդ միավորների: ,,Թայց գիտելի է, թէ ոչինչ ստորակէտ քաջարձակ ճայնիւ ասի, այլ այլ խոնարհեցուցանէ և յերկարէ՝ առ ի վերայ ածելոյ զկատարեալ տրամախութիւնն: ,¹⁰:



3. Միջակետի շնորհիվ քարդ համաշասալան նախադասության ըաղադրիչները կապակցվում են միմյանց, ծուլելով ենթադատությունը: Միջնադարյան քերականները միջակետի ինտոնացիան մեկնում են որպես կիսահանգամեն և առանձնացնում վերջնահանգի քնույթից: Ստեղանոս Սյունեցին ճայնի դադարների ընույթը քացարում է միջակետի կապակցությամբ՝ շեշտելով հնչերանգի դերը նախադասության համար: Միջակետի հանդիպելիս, ասում է նա, ճայնը ոչ թե քոլորովին դադար է առնում, այլ կախ է ընկնում՝ շունչ տանելու համար, իսկ վերջակետի հանդիպելիս ճայնը հանդարտ իջնեցվում է. , իսկ միջակ՝ նշան ոգի սակա ընդունելոյ, քանզի արդարն իսկ որպէս ոգի ի սմա առնու ընթերցաւդն՝ իսկախ ունելով զգայնն և ոչ հանգիստ իջուցանելով, զի այս ի վախճանին եղիցի: ,¹¹:

Դեպի միջակետը ընթանալիս առովասացությունը կորացնելով ելեէծը, լիցքափորում է ճայնումը, հապաղում ընդհանուր ճայնածավալի միջին մասում այնպես, կարծես շարունակությունը պիտի ավարտի ինտոնացիոն միտքը, լուծելով միջակետի հապաղած միջին աստի-

10 Հովհաննես Երզնկարի, Նույնը, էջ 166:

11 Հ.Միջթարյան, Նույնը, էջ 36:


ծանը՝ վերին կամ ստորին հանգույցների մեջ։ ; , իսկ ասելո՞ւ ի՞ւ առանձնանայ կէտ ի պտորակիտէ, - ամանակաւ՝ զայս զմիջին կիտէն ասէ, լիսան զի զատուցանէ ի միմիանց զվերինն և զստորին կէտն; ու սոյն ասի ամանակ, զի եթէ ըթթումն մի ական ժամանակ ասի, ո՞չչափ ևս առաւել արտաքերութիւն բանին լեզուաւն, 12:



Հայ երաժշտակիտության մեջ ձայնատիմանների կամ հնչյունաշարի նախնական տարրերի ծևալորումը տրոնության միջնորդ քաջատրելը արդյունք է տեսական վերացարկությունների, որի հիմնադիրը դարձյալ Կոմիտասն է: Բայց ինչքան էլ դա վերացարկում լինի, միևնույն է, անհեղեղի է այն հանգամանքը, թե երաժշտական համակարգի նախնական տարրերի ու տիպարների սալմնավորման երևույթը կատարվում է լեզվական ինտոնացիոն համակարգի հիման վրա և վերացարկումների հիմքում դրված են օրյեկտիվ և հարաբերականորեն կայուն երևույթներ։

Թուշնարյանը հիմնավորելով քառալարերի կոմիտասյան դրույթը, ապացուցում է, որ դա հայ երաժշտության տեսության հիմնաքաղըն է: Ընդհանրացնելով հազարավոր գեղջուկ ու հոգևոր երգերի ազգագրական-գործնականը, Թուշնարյանը ընդլայնում և խորացնում է այս տեսակետը, ստանալով հայկական երաժշտության հնչյունաշարերի կառուցման վերջնական և լիարժեք գալուստանը. , Հայկական մոնողիկ երաժշտության ձայնաշարը իրենից ներկայացնում է ակուստիկական համակարգ, կազմված քառյակային շարքերի, կամ սերիաների հյուսածո միությունից: Ներքեմի ամենացածր քառյակային սերիան պայմա-

Նականորեն անվանենք միքսոլիդիական, հաշվի տանելով այն հանգամանքը, որ լրիվ դիատոն հնչյունաշարի համակարգում այս սերիայի հնչյուններից յուրաքանչյուրը իր վրա կարող է վերցնել միքսոլիդիական լատի տոնիկայի ֆունկցիան: Ելնելով նույնանման դասողություններից, ըստ քարմության երկրորդ սերիան անլանենք էոլական իսկ ամենաքարմություն՝ լոկրիական: ¹³



Քուշարյանի խնդիրներից դուրս է նման կտորւցվածքի ինտոնացիոն ծագումնաքանության մեկնաբանումը ու այդ համակարգը նապատճական մոտեցումով չի վերլուծում, այլ դիտում է որպես պատմականորեն ձևավորված, ավարտված փաստ-իրողության:

Խազերի էության մեջ թափանցելու համար պարտադիր է պատմական մոտեցումը, որովհետև խազերը անցել են հազարամյա պատմական գարգարյան ծանապարհ, որը ուղիղ համեմատական է հայկական երաժշտական համակարգի զարգացմանը, իսկ հայ երաժշտության համակարգը դարերի ընթացքում չի շեղվել իր արմատական սկզբունքներից, քանզի նրա ծնողը՝ հայերենը, սոսկ զարդացում է տպել և ոչ այլասերում:

Կատարյալ մաքրության և հստակ իմաստության հասած քառակորերից շղթայված կառուցյաց արդյունք է Հայկական լեռնաշխարհում նախնադարից գոյատևող քազմակեսակ ինտոնացիոն կուտակումների:

¹³ X.C.Կոշինարեա, Вопросы истории и теории армянской монодической музыки, Ленинград, 1958, стр. 323.

փոխազդման, ներածման և այլ հարաբերակցությունների:

Ինտոնացիոն զարգացման առաջին շրջանում նպանակացյան տարերային ինտոնացիոն արտահայտություններից ըյուրեղացող փոյութիւնկան, միկուլիդիական և էոլական հիմքերում ընթացող ելեկչները գոյակցել են միմյանցից անկախ, ենթարկվել են բազմապատճի պառկանակոր դրությունների՝ լաղազոյացումների դարավոր ընթացքում:

Երկրորդ փուլում, երբ այս հիմքերը սկսում են հանդիս գալ նույն եղանակի մեջ շարահյուսաքար, առաջանում են փոխադարձ համաձայնության պահանջներ, որոնք ծնում են ինտոնացիոն քանաձների նախնական տիպերը: Կայունացող շեշտադրական համարմանքների առկայությամբ սկսում է սանծվել սաղմնային եղանակների տարերքը:

Երրորդ փուլում ավարտվում են երեք հիմքերի փոխադարձ համաձայնության գործողությունները: Հաստատվում են ինտոնացիոն թիջների քանաձներն ու որոշակիանում են այն հուները, որոնցով կարող են ընթանալ ստեղծված քանաձներով շարահյուսակած եղանակները: Հայկական երաժշտության համակարգման այս վերջին շրջանն էլ կատարվել է հայոց լեզվի շեշտադրության համակարգի կայունացման, այսինքն հանկաշեշտի միիշխանության հաստատմանը զուգընթաց, որի շնորհիվ և համակարգվել է միջշեշտադրական ենթադատության տրամադրության դրությունը:

Տրոհության համակարգը լինելով այն ընդերքը, որն ստեղծեց երաժշտական համակարգի նախահիմքը, այդ համակարգի որոշակիացումից հետո կատարեց մի կարևորագույն խնդիր ևս, այս անզամ արդեն առանց վերացարկումների՝ հստակ և շոշափելի: Շարականների երաժշտության մեջ տրոհության նշանների միջնորդ են հայտնի դառնում տաղաչափության և ձևատեղեման մի շարք կարևորագույն հայեցակետեր, որովհետև շարականների երաժշտական ձևերը անխզելի են նրա տաղաչափության և գրվածքի տրոհման ձևերի հետ /այս մասը

կմեկնվի համապատասխան գլխում:

Վերջակետի հետ է առնչվում նաև հայ հնագույն երաժշտագիտության մեջ ընդունված վերջավորող ձայնի գաղափարը. „վասն զաւարտեալ կէտ զվերջինն ասէ. զկատարումն արամախոհութեան խորհըրդոյն,,¹⁴ „Կէտ ի տրամախոհութեան անգեցելոյ նշան,- զայս զաւարտեալ կիտէն ասէ՝ զվախման ենթաղատութեանն,,¹⁵:

Մեղեդիական դարձվածքը կամ թեման՝ երջ հանգավորիում է որևէ աստիճանի վրա, իսկ վերջինս ընդհանուր ձայնեղանակային հնչյունաշարի որևէ մաժոր քառալարի չորրորդ աստիճանը չէ, ապա այդ դարձվածքի կամ թեմայի ընդերքում մեկ կամ երկու ձայնաստիճանի ածանցման շնորհիվ սկսում է. հանդես գալ ածանցյալ մաժոր քառալարը, որի չորրորդ աստիճանը արդեն համընկնում է տվյալ վերջավորող ձայնի հետ: Օրինակ՝ առաջին ձայնեղանակում վերջավորող ձայնը՝ *α* – ս տվյալ ձայնեղանակի հիմնական *f-f-a-d* քառալարի երրորդ աստիճանն է, բայց *g* ձայնաստիճանի կիսվեր ածանցման շնորհիվ նա դառնում է *e-f-g-i-z-a* մաժոր քառալարի չորրորդ աստիճանը:

Ածանցյալ մաժոր քառալարերի կառուցման վրա է հիմնված քուլոր դարձվածք ձայնեղանակների ստեղծումը, որի համար էլ, հավանաբար, նրանց „դարձվածք,, են անվանել:

Հայկական ընդհանուր դիատոն հնչյունաշարի տարածքում հավելյալ մաժոր ոլորտների առաջցցման կազմակցությամբ, շարականների ութեայնի համակարգում կատարվում են հետեյալ ածանցումները.

g-g-i-z /ած, ած դարձվածք, ակ, ակ դարձվածք, դժ դարձվածք/

b-h /ած դարձվածք, ակ, ըժ դարձվածք, ըկ, դժ, դկ ստեղի/

14 Հովհաննես Նրգնկացի, Նույնը, էջ 164:

15 Հովհաննես Շործներնցի, Մատենադարան, Ժողովիր 6396, էջ

d - des /ակ դարձվածք, դժ դարձվածք, դկ ստեղի/

d - dis /գճ դարձվածք/

e - es /ըժ դարձվածք/

f - fis /բժ դարձվածք/

ԱՐԴՅԱՆՈՒԹՅՈՒՆ

Խոսակցական կամ երաժշտական մտքի իմաստային և հուզական կողմի արագահայումը ինտոնացիոն արտաքերումների միջոցով կոչվում է առողանություն։ Խոսակցական առողանության համակարգի որոշակիությունը պատմական զարգացման ընթացքում ստեղծել և զարգացրել է երաժշտական առողանության համակարգը, և պատահական չէ, որ առողանության նշաններին զուգահեռ հանդես են գալիս պարզագույն խազերը, որոնք երաժշտական առողանության հիմունքներն ու պարզ երաժշտական մտքերի կառուցման արտահայտիչներն են, մի տարբերությամբ, որ խազերը ձայնաստիճանային և Փունկզիոնալ դրույթները մանրամասն և ծշտիվ արտահայտելու համար հանդես են գալիս ալելի մեծ բանակով։

Առողանության նշաններ

2Ե2Թ

ՅՈՒԹ

ԵՐԿԱՐ

ՍՈՒՂ

ՊԱՐՈՒՅՔ

ՈԼՈՐՑԿ

Խազանշաններ

2Ե2Թ

ՄՈՒՐ

ՓՈՒՉ

ՓՀԱԴԱՐԾ

ՅՈՒԹ

ՊԱՇԿ

ՎԵՐՆԱԽԱՐ

ԵՐԿԱՐ

ՅՈՒՐ

ՍՈՒՂ

ՊԱՐՈՒՅՔ

ՅԵՆԿՈՐԾ

ՈԼՈՐՑԿ

ԽՈՒՆԾ

Առողջանական յուրաքանչյուր միտք արտահայտվում է համապատասխան հնչյունային դարձվածքով և գուզահուար, ամեն մի խաղին համապատասխանում է յուրահատուկ հնչյունային քանածն։ Այդ քանածները, որոնց կոմիտասն անվանել է շեշտադրական քանածներ, կարող են կազմված լինել մեկ կամ մի քանի հնչյուններից։ Հայկական երաժշտության հյուսվածքն իրենից ներկայացնում է միմյանց ադրդիքած շեշտադրական քանածների շարք, որը և արտագոլված է խաղային գրվածքներում։

Երականների խաղալոր գրածքների ուսումնասիրությունը, ըստ արտաքին տվյալների, գույց է տալիս, որ բոլոր ծայնեղանակներում գոյություն ունեն խաղերի կիրառման տարբեր խորհրդական գրառված եղանակներ։ Ութ ծայնեղանակներում էլ խաղանշանների սակավ խորհրդական գրառվածքները կազմված են միկնույն նշաններից, ալելին, շատ հաճախ նույնիսկ տարբեր ծայներում կիրառվում են խաղային նույն հաջորդականությունները։ Ցուրաքանչյուր խաղանշան իր մեջ պարփակելով որոշակի ինտոնացիոն գաղափար, ամեն մի ծայնեղանակում արտահայտվում է յուրովի և տարբեր հնչյունային քանածնով, որպեսզի արտացոլի տվյալ հնչյունաշարի և ծայնաշադարձին տրամադրության առանձնահատկությունները։ Եթե այդպես չլիներ, ապա անհիմաստ կղառնային խաղային գրառվածքների հենց սկզբանում դրված ծայնեղանակային համառոտագիր ցուցիչները /աճ, ակ, քճ, թկ և այլն/, որոնք կոմիտասի կողմից նշված քանալի խաղերն են, ինչպես լուսաբանում է Ն.Թահմիզյանը¹⁶։

Շեշտադրական քանածների հիմքն ու քաղաքրիչն են կազմում երեք ինտոնացիոն մարմիններ, շեշտը, քութը և պարույկը, որոնց ուսումներով է սկսվում խաղափառության այբուբենը։ Առողջանական տության մեջ շեշտված հնչյունը ընկալվել է որպես „,աքրօն և

16. „Պատմա-քանասիրական հանդես,, 1969, N 4, էջ 39-47:

սուր յորդելական ժայն,, և անմիջաբար առնչվել է առոգանվող պրտասանության կամ երաժշտական մկի հարաբերական կամ քացարձակ տոնայնության հետ։ Հ.Միհիթարյանը վերը ուժեղով շեշտի պատմական տեսությունը նշում է. , , Հայ քերական մեկնիշներն ընդհանրապես միշտ են ըմբռնել տոնայնության և շեշտի ընույթը։ Քննելով շեշտի հարցը՝ Դավիթը ուշագրավ հետևության է հանգում, որը մեր դպրության համար ընութագրական է իր վաշեմությամբ։ Նա միանգամայն միշտ կերպով պնդում է, որ տոնայնությունը քացարական քանական էակի՝ մարդու հատկանիշն է. այն ուրիշ քան չէ, եթե ոչ մայնի զատշամ ելևէջում. , , իսկ ոլորակն միայն քանականիս առ ի պատկանաւոր հւենելոյ ժայն,,,: Շեշտված հնչյունը շեշտադրության քանամկի կենորոնն է, որովհետև այն կարող է հանդես գալ. շեշտակի, եթե նրան նախորդում է ավելի ցածր հայնաստիման, որի հետ համեմատած է այն,, քարքը և սուր յորդելական,, , միաժամանակ նրան պիտի հաջորդի ժայնաստիմանի և ժայնուժի իջեցում, որպեսզի շեշտված հնչյունի ընույթը ամփոփվի։

Զայնի վերընթաց, պատառուով վայրընթաց շարժումներից կազմված ինտոնացիան նաև ոլորակային է կոչվում. որի վերընթաց քաղկացուցիչը շեշտն է, վայրընթացը՝ ըութը, իսկ երկուսի միաձույլ հաջորդականությունը՝ պարույկը։ , , Արդ, շեշտն՝ որ է սուր, և ըութն՝ որ է ծանր, եղենքին ոլորակը ասին, զի որպէս շեշտն ի վեր հանելով սրէ, նոյնպէս և ըութն՝ ի խոնարի իջուցնելով հարթէ, և յերկողունց ծայրիցն, ի շեշտէ և ի ըթէ, ըսկանայ պարոյկն, որպէս ի սեղյն և ի սպիտակէն՝ գոշն։ Եւ է պարոյկն քեկումն ծայնի և շրջումն վերուստ ի վայր. ըթիւ և սրութենէն, որպէս և մեն գուցանէ, շեշտ ոչ է, զի ըթի վերջն. ըութն ոչ է, զի սուր է սկիզբն., ,¹⁷:

17 Խաչյի նշեցի, Խույնը, էջ 170:

Հայկական երաժշտության ինտոնացիոն քանաձևերի շռեմարանով քազմաթիվ են ոլորակային շեշտադրության տարածեակները, թայց այդ քազմության մեջ որպիս արմատական հանդես է գալիս զլիավոր քառալարի վրա կառուցված շեշտադրական քանաձևի տիպարը։ Ըստ քերական մեկնիշների, շեշտը և վերջակետը տոնայնության տեսակետից գուղլում են միեւնույն աստիճանի վրա, այսինքն շեշտին համապատասխանում է մաժոր քառալարի չորրորդ աստիճանը. . . , Այժմ դնէ՝ զկետըն զկնի, յերիս քաժանեալ, զի ցուցէ թէ որ ոլորակ յորում կետի ունի զդրութիւն։ Քանզի շեշտն՝ յաւարուակէտին դնիս, իսկ բութն ի ստորին՝ և դարոյկն՝ ի. միջակէտին, ¹⁸:



Տրոհության համակարգով հրմանավորված մաժոր քառալարը զօլիավոր ինտոնացիոն ասպարեզն է հանդիսանում առաջին ձայնեղանակի կտուզմածքում և նրա միջողով են հայտնի դառնում շեշտադրական քանաձևերի և խազանշանների արժեքները։

Բանավոր փոխանցումներով մեզ հասած առաջին ձայնեղանակ 158 շարականների և համարյա նույնքան զեղջկալան երգերի կամ քեկորների ուսումնասիրությունը ցույդ է տալիս, որ այս ձայնեղանակում շեշտադրական քանաձևերը հանդես են գալիս նախնական և անկանույն կերպություն, որոնք անմիջականորեն ծնունդ են առնում լեզվա-ինտոնացիոն համակարգից և հայելորեն անդրադարձնում են տրոհության համակարգից առաջացող երաժշտական նախնական հիմունքները։ ԱՃ-ի ձևակազմական միջոցների սահմանափակությունից հետեւ

18 Հովհաննես ծործորեցի, նույնը, էջ 11:


վում են մի շարք օրինաշափություններ, որոնք խստորեն կիրառվում են զեղջլական երգերում և շարականներում, չնայած ժամանակ-ները մեծ վթարներ են հասցրել երկուսին էլ:

Առաջին ժայնեղանակի ինտոնացիոն ողջ ասպարեզը խարսխիած է միկսոլիդիական, փոյուզգիական և էոլական մեկական քառալարերից շաղկապված հնչյունաշարի վրա:



Փոյուզգիական և էոլական ոլորտների շեշտադրական ըանաձևները սերտորեն կապված են գլխավոր /միկսոլիդիական/ ոլորտի շեշտադրության հետ և երեք միաձույլ ֆունկցիոնալ փոխարարերությամբ ոլաստիկորեն մարմնավորվում են աճ-ի մեղեդիական կերպարները:


Աճ-ի լողային կառուզվածքը այսպիսին է, որ նրա հնչյունաշարի երրորդ աստիճանը՝ փոյուզգիական քառալարի հիմքը՝ Ա-ն հանդես է գալիս որպես զլխալոր և միջիշխան ֆունկցիոնալ ապակենարուն: Նա թե դիմոդ ձայնն է, թե՝ վերջավորողը, և իր մեջ է լուծում իրենից ներքև և վերև գտնալող քոլոր ձայնաստիճանները, կամ նրանց վրա տռախացած ժամանակավոր խտացումները:



Մաժոր քառալարի շեշտադրությունը, որ կատարվում է *f-b* թիշթի, լամ նույն ձայնահատվածի աստիճանական վերելքի միջոցով, ստեղծում է *b* ձայնաստիճանի հիմնավորումը, որն իր հերթին

որպես ծգտող հնչյուն՝ լուծվում է ա -ի մեջ, առաջացնելով
ոլորակային շեշտադրական քանածե:

Ան շարականների և գեղջկական երգերի կառուցվածքում f-ի-ա
ոլորակային շեշտադրական քանածեք կամ նրա տարատեսակները երգի
ձևագործության ընթացքում հանդես են գալիս որպես հիմնական ին-
տոնացիոն շինանյութ, և երաժշտական թեմաների ծնչող մեծամասնու-
թյունը սկսվում են նրանցով:



f - 6 - α բանաձևի տարածեսակները առաջանում են նրա որևէ

անդամի սղումից կամ տարեք մասերի կրկնությունից, խոսքերի շեշտադրության և ինտոնացիոն ընույթի հետ համապերստացուն ստեղծելու նպատակով:


Սերտ առնչություն՝ գոյություն ունի երգի գրական շեշտադրության և մեղեդու շեշտադրության միջև։ Շեշտադրական քանաձևն շեշտված մասը պիտի համընկնի խոսքի շեշտվածքի հետ, այլապես երգը կտառանվի, կվորցնի ներդաշնակությունը և անիմաստ կդանաւ։ Այս հիմունքը հետեւղականորեն իշխում է գեղջկական երգերում, իսկ շարականների պահպանված երաժշտության մեջ՝ մասնակիորեն, որն անշուշտ, հետևանք է ուշ շրջանի հոգևորականության կամայականություններից առաջացած աղմառության։

Ամ-ի երաժշտական թեմաթիկայի կառուցման և շեշտադրական քանաձևի տարածեսակների կիրառման միջև գոյություն ունեն որոշակի օրինաչափություններ։ *f - 6 - α* հիմնական քանաձևը, որ ընդգծում է ամ-ի տրամախոհության կարևորագույն ֆունկցիոնալ հանգույցները / α -ն որպես դիմող ժայն, *f - 6 - n* որպես շեշտակիր ժգոտող հնչյուն, *f - n'* ստորին մեղիանտ, միաժամանակ մաժոր հիմքի արտահայտիչ, *f - 6 - n'* մաժոր և գլխավոր ոլորտի շեշտադրություն, քացառապես կիրավուուն է երաժշտական թեմայի կամ դարձևածքի սկզբ-քում։ Այս օրինաչափությունը քացահայտորեն արտահայտված է խազյին գրվածքներում։

1. Շեշտ և քութ ինտոնացիաներով քաղաքության շեշտադրական քանաձևը արտահայտող շեշտ /սուր/ և քութ նշաններով կազմված փշաղարձ / / խազյանշանը խազյին գրվածքներում քացառապես զըտնըվում է նախադասության, կամ նրա համադաս և ստորադաս միավորների սկզբում։ Ամ-ի տրամախոհության մեջ թեմայի կամ դարձևածքի սկզբում մաժոր արմատի՝ *f - h* օգտագործումը այնպիսի անհրաժեշ-

տության է հասնում, որ գեղջկական երգերում, երբ մեղեղիսկան դարձվածքը ընդհանուր ենթատերսից ել նելով սկսվում է ի ձայնաստիճանից, ապա *f* -ը մերժայորեն կցվում է նախորդ դարձվածքի վերջին հնչյունին, որպեսզի *f-b* մասունքը կիրառվի, թե կուզ քեկված դրությամք:

19



Շարականների երաժշտությունը, որը տեսականորեն հստակված երաժշտական օրինաչափությունները օգտագործում է կանոնական նպատակադրվածությամք, *f* -ի կիրառումը միշտ զուգորդում է դարձվածքի առաջին վանկի հետ:

Շարականներում երաժշտական թեմայի չափն ու ծավալը կախված են գրվածքի տաղաշափական առանձնահատկություններից: Ըստ տաղաշափության, շարականները արձակ կամ չափածո քանաստեղծություններ են, հիմնականում երեք տնից քաղկացած: Քանաստեղծության յուրաքանչյուր տանը համապատասխանում է մեկ երաժշտական թեմա, որը կազմված է մի քանի դարձվածքներից: Զակածո քանաստեղծության մեջ յուրաքանչյուր տողին համապատասխանում է առանձին դարձվածք, իսկ արձակի դեպքում դարձվածքները քաժանվում են ըստ նախադասության համարական կամ ստորադասական ջլատումների: Աճ շարականներում տոկա են 460 երաժշտական թեմա՝ կազմված շուրջ 1600 դարձվածքից, որոնցից մոտ 700-ը. /համարյա 44-րդ մասը/ սկսվում են փշադարձ խազանշանով:

Խազային գրվածքներում ոչ քոլոր վանկերն են, որ խազանշան

19 Կոմիտաս, Ազգագրական ժողովածու, հատոր 2-րդ, էջ 56, նրեան, 1950:

Են կրում իրենց վրա: Խազավոր վանկերի ինտոնացիոն արժեքները տարածվում են ազատ վանկերի վրա, ինտոնացիոն քանածերի ոիթմական տարանշառումներին համապատասխան: Խիստ ոմի շարականների ոիթմական կառուցվածքը այնպիսին է, որ յուրաքանչյուր վանկին որպես հիմունք համապատասխանում է մեկ հնչյուն, $\frac{1}{4}$ անողությամբ: Վանկի վրա հնչյունների ալելացումը, կամ անողության փոփոխությունը արտահայտվում է համապատասխան խազերի կիրառումով:

Քանածեում գշադարձը դրվում է առաջին անդամի՝ \int -ի վրա, որը նրա էռության հիմնական արտահայտիչն է, իսկ մյուս երկու հնչյունների հանդես գալը կախված է նրան հաջորդող ազատ վանկերի քանակից և հաջորդ խազի քնույթից, որի քանածեի հետ δ -α մասնիկը պիտի ներդաշնակորեն միահյուսվի: Այսպես առաջանում է խազանշանի հիմնական քանածեի հոլովումը, որը կատարվում է նրա երկրորդական անդամների սղման կամ կրկնության միջոցով: Հոլովումների խնդիրը խազերի ընթերցման մեջ լուծվում է միարժեքորեն, որովհետև խիստ որոշակի են այն հանգամանքները, որոնք մասնակիորեն փոփոխության են ենթարկում խազանշանի քայլարձակ արժեքը: Առողջանության ենթաքամինը ուսումնասիրում է խազերի նշանակության հիմնական դրույթները, իսկ նրանց հաջորդականությունների ու կտպացումների մասին կմեկնվի „Նեխադառություն,, քաժնում:

2. Աճ-ում հանդես եկող ալելի քան 40 խազառեսակների ընդհանուր քանակը մոտ 8500 միավոր է, որոնց ուղիղ կեսը ըութեալ փուշ \checkmark խազանշաններն են. ըութե 21 տոկոս, իսկ փուշը՝ 29: Ըստ քերական մեկնիչների, ըութե կիսահանգամեւ ստեղծելու զորություն ունի „քանզի ըութեն՝ ի խոնարհ իջուցանելով հարթէ,,,: Բութի միջոցով հանգամեւ ստեղծելու հանգամանքը՝ հիմնավորել են նորագույն շրջանի ըոլոր՝ խազաքանները /Կոմիտաս, Ռ.Աթայան, Ն.Թանմիզյան/, որոնց եզրակացություններն անհակասելիորեն միատեղվում են

և միմյանց լրացնելով պարզաբանում են քութի էությունը:

Խազային գրվածքներում պարզորոշ են կիսահանգածների և վերջնահանգի նաշանակազմությունները: Ոչ մի երաժշտական թեմա /շարականի տունը/ չի ավարտվում քութ խազանշանով, այնինչ, դարձվածքների մնշող մեծամասնությունը եզրափակվում է քութով: Շարականների և գեղջկական երգերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կիսահանգի ընթացքը աճ-ի կառուցվածքում կատարվում է $\alpha-g(i)$ - α թանաժնի բիջոցով, որը դարձվածքի վերջում հանդիս է գալիս ամբողջությամբ, իսկ միջին մասերում՝ նաև սղված դրությամբ, որպես α , $g(i)$ կամ $g(i)-\alpha$: Խազային գրվածքներում թեմայի կամ դարձվածքի միջում կիրառվող քութ նշանին անմիջականորեն հաջորդում է փուշ խազը: Այս հաջորդականությունը, որ անխօնի կիրեն է, հանդիս զալիս աճ-ում և երբեք չի տարանշատվում որևէ այլ նշանով, հանգում է մի շարք օրինաշափությունների:

3. Աճ-ի ինտոնացիոն կառուցվածքն այնպիսին է, որ կիսահանգի երևույթին անհրաժեշտորեն պիտի հաջորդի որևէ շեշտադրություն: Այս նոր, միջանկյալ շեշտադրությունը ի տարբերություն փշադարձի սկզբնավոր շեշտադրության, որը պատկանում է մաժոր քառալարին, ընդգրկում է նաև էոլական ոլորտը և այն լուծում միկսոլիդիական /մաժոր/ շեշտադրության մեջ: Փուշ խազանշանով արտահայտվող այս գործողությունը իրականացվում է էոլական ոլորտի շեշտված հնչյունը արտահայտող C. ծայնաստիճանի լուծումով մաժոր ոլորտի շեշտի արտահայտիչ ֆ-ի մեջ՝ ֆ-с-ի քանածնով: Փուշը երկմաս խազանշան է: Նրա գծագիրը ստացվել է քութ և շեշտ նշանների գումարումից և այս հանգամանքը պատահական չէ: Ընդհանրապես քութը խազանշանների արտաքին պատկերների կառուցվածքը սերտորեն կապված է նրա ներքին քովանդակության և ինտոնացիոն քաղդրության հետ: Աճ-ի շեշտադրությունները, որ անխօնի կիրեն կապված են մաժոր քառալարի հետ, արտահայտվում են շեշտ և քութ նբշանների տարբեր համարություններով: Անենազլիսկոր շեշտը՝ մա-

ժոր քառալարի չորրորդ աստիճանը՝ ծ -ն, արտահայտվում է հենց շեշտ խազանշանի միջոցով, իսկ մյուս երկու քանաձեւերը առնչվում են զութի ինտոնացիոն էության հետ, և ըստալապար նրանց խազանշանների. պատկերակառուցման մեջ շեշտին միահյուսվում է նաև զութի: Փուշը և փշադարձը արտաքուստ, ներքին քովանդակությամբ և անվանմամբ հակառակերներ են: Փշի նշանակազմությունը սկսվում է զութով, իսկ փշադարձինը՝ ավարտվում: Նույնպիսի հաջորդականություն գոյություն ունի նաև նրանց ինտոնացիոն դերի մեջ. փշադարձի ոլորակային ֆ-թ-օ քանաձեւ ալարտվում է զութին պատկանող ա հնչյունով, իսկ փուշը հանդիս է զալիս այնպիսի դիրքով, որին նախորդում է ա -ն:

Խազային գրկածքներում շատ հաճախ, երջ չուշին չի նախորդում կամ հաջորդում զութ նշանը, փուշի արժեքը տեղադրելուդ հետո նրա առջևում կամ վերջում մնում են ազատ վանկեր, որոնք լրացվում են ա հնչյունով, որովհետեւ. այս հնչյունը իր դիրքով ամբողջացնում է փուշի քանաձեւի ընույթը թե սկզբից և թե վերջից: Նախորդ կամ հետադիր ա մասնիկը տելի է ընդգծում փուշի. թ-օ վերելքը, կամ օ-թ վայրէքը և հաճախ է հանդիս զալիս որպես փոխանցիկ հնչյուն՝ հարեան խազերի արժեքների հետ փուշի քանաձեւ միահյուսելու ընթացքում:


Փշի սաղարձակ նշանակությունը հոլովման ընթացքում մասնավում կամ մասնակիորեն կրկնվում է և կարող է հանդիս զալ թ, թ-թ, թ-օ, օ, օ-օ, օ-թ արժեքներով, որն արտահայտվում է լրացուցիչ խազային կամ կետադրական հավելուրդով: Օրինակ՝ փուշ և շեշտ հաջորդականությունը թ-թ է նշանակում, որովհետեւ հավելյալ շեշտի արժեքը, որ միայն թ է նշանակում, երկառվում է փշի թ -ն, և այս հանգամանքը ձևական չէ, որովհետեւ այն թելարվում է երգի խոսքերի շեշտադրության ընույթից, նրա մեջ առկա զույգ շեշտվածքի հետ համարվելու նպատակով: Նույն պատճառով

Ը -ի կրկնության արտահայտման համար օգտագործվում է կետավոր փուշ խազանշանը:

4. Ամ ոլորակային քանածների կազմում լիակատարը Յ-Ը-Ա քանածն է, որովհետև այն ներտնում է բոլոր երեք ոլորտների շեշտերը, և ընականարար իր լիարժեքության պատճառով արտահայտվում է հենց ոլորակը ։ Խազանշանի միջոցով: Ոլորակի միջոցով հանգածն է ստեղծվում Յ -ի վրա, որովհետև Ը -Ձ եռյակը կենտրոնաձիգ երևույթ է առաջացնում որպես վերին /Ը/ և ներքին /Ձ/ ձգտող հնչյունների լուծում՝ միջին /Յ/ ձայնաստիմանի մեջ: Ոլորակ նշանը երեքը չի հանդիպում թեմայի վերջում, որովհետև քուն առաջին ձայնեղանակի վերջավորող ձայնը Ձ -ն է, իսկ առաջին ձայն դարձվածքինը՝ Ը -ն, բայց նա համար է կիրառվում միջին դարձվածքների վերջում, որովհետև նրա միջոցով ինտոնացիան խտանում է Յ -ի վրա, որպեսզի հաջորդ /վերջին/ դարձվածքը լուծվի Ձ -ի կամ Ը -մեջ: Ամ-ում ոլորակի նշանին միշտ նախորդում է շեշտը կամ փուշը, որոնց արժեքները ներդաշնակ են ոլորակի քանածնի հետ: Շեշտի Յ ձայնաստիմանը ոլորակի առաջին անդամն է, իսկ փշի Յ-Ը -ն՝ առաջինը և երկրորդը միասին: Հոլովման ընթացքում ոլորակի անդամները չեն սրդվում, այլ կարող են կրկնվել, որը նույնպես արտահայտվում է շեշտի միջոցով: Յ-Ը-Ա քանածնի մեջ ոլորակը դրվում է Ը հնչյունին պատկանող վանկի վրա և ոլորակ ու շեշտ հաջորդականության դեպքում Ը -ն կրկնվում է, որովհետև այն ոլորակի կիրառման ոլորակի շեշտված հնչյունն է:

5. Ոլորակի հակասատկերն է Խուճ ։ Խազանշանը, որը ի տարբերություն ոլորակի, համարյա չի հանդիպում շարականի միջին մասերում /քացառություն է կազմում մեկ դեպք/, և լայնորեն կիրառվում է թեմաների վերջավորություններում: Ամ շարականներում որպես վերջնահանգածն հանդիս է զալիս Ա-Յ-Յ-Յ-Ա ծավա-

լուն քանաձնը, որը տվյալ Ֆունկցիոնալ խնդրի քաղանայումն միակ լիարժեք կերպարն է, որովհետև ծ-ցի և ցի-ծ եռյակները կենտրոնածիզ դրություն են ստեղծում ծ և ցի աստիճանների համար, որոնք անխուսափելիորեն լուծվում են ա -ի մեջ: Բանավոր Փոխանցված երգերի մեջ չի հանդիպում մի այլ քանաձն, որն ավելի դիպուկ ու հստակորեն կատարի վերջնահանգի տվյալ դերը: Խազային գրվածքներում խուննը հանդես է գալիս այդ քանաձնն արտահայտող խազախմբում, որը երգեք տարբերակման չի ենթարկվում:



Այստեղ օռւթը, փուշը և շեշտը գտնվում են իրենց արդեն քացանայտված Ֆունկցիաների մեջ: Երկար խազանշանի արժեքը դժվար չէ որոշել, որովհետև նա գտնվելով թեմայի վերջին վանկի վրա, անզայման պիտի գրավի վերջավորող ծայնի դիրքը՝ ա -ն, անհայտ է մընում միայն խուննի տակ գտնվող հնչյունի աստիճանը, որը և միարժեքորեն լուծվում է, որովհետև քացի ցի-ից այլ, այլ հնչյուն կիրառելու դեպքում, քանաձնի կառուցվածքը և արտահայտչականությունը անհմաստ են դառնում: Խուննի մասին մեր եզրակացությունը համընկնում է Ռ.Աթայանի ենթադրության հետ, որ նա արել է „Հայկալան խազային նոտագրություններում, արժեքավոր աշխատության մեջ: Տվյալ խնդրի վերաբերյալ նա նշում է. Համեմատությունը ցույց է տալիս, որ պահպանված երաժշտության մեջ օրլոր ծայների խունն ունեցող կտշանսներին համապատասխանող դարձվածքներում եղած ընդհանուրը՝ դեպի վար տերցիային ընթացքն է, որը մեծ մասամբ սահուն և այս կամ այն չափով մելոդիզարդված է: Այդ ընթացքը, մնշող մեծամասնությամբ, համընկնում է խազերում նույն կտշանսներում եղած խուննի հետ, որոշ դեպքերում տարածվելով խուննից մեկ վանկ հետ կամ ուալ: Դեպի վար տերցիային ընթացքին միշտ հաջորդում է վերընթաց

շարժում, մասամբ մեկ աստիճանով, երբեմն էլ թոիչքով, որը համապատասխան է խազերի կաղանսներում խունմից հետո եղած շեշտին կամ փուշին,,²⁰:

6. Խազային գրվածքներում քոլոր տները վերջանում են երկար նշանով, և դա օրինաչափ եղեռույթ .է, որովհետև թեմայի վերջին հնչյունը միշտ երկար տևողություն ունի, իսկ որ երկար խազին համապատասխանում է երկար տևողություն, դա հայտնի էր Կոմիտասից էլ առաջ և ընդունվել է քոլոր խազաքանների կողմից: Երկարը տոնչվում է վերջավորող ծայնի գաղափարի հետ և նրանով են արտահայտվում ոչ միայն թեմայի վերջին հնչյունը, այլև այն հանգամանքները, որոնք կսպ ունեն ծայնի վերջավորման հետք ԱՃ-ում երկար խազը հանդես է գալիս երեք հիմնական դրությամբ, որպես գլխավոր քառալարի վերջավորող ծայն, երբ երկարացնում է ՚ ծայնաստիճանը, որպես ընդհանուր ծայնեղանակի եզրափակող հնչյուն՝ երկարացնելով ՚ ՚ ՚ , և դարձվածքների միջում՝ ՚ ՚ -ա քանաձեռոյ, որն ստուգում է նրա առաջին և երկրորդ դրությունների միաձուլումից: Այս քանաձեռ առաջացել է որպես անհրաժեշտություն, ֆունկցիոնալ և ոիթմական հանգույցներ լուծելու նպատակով, որովհետև հանդես է գալիս այնպիսի տեղերում; որտեղ անխուսափելիորեն պիտի եզրափակվի գլխավոր քառալարը, թեև չի կարելի այդ կետում դարձվածքը վերջավորել, քանի որ երգի խոսքերը ընթաղել մեջ են և անհրաժեշտ է մենեղիալան ընթացքը ևս շարունակել, իսկ դա հնարավոր է միայն ՚ ՚ -ի կիրառումով: Այս քանաձեռ խորի լուծման միակ ուղին է նաև այն դեպքում, եթե երկարը անհրաժեշտորեն պիտի սկսվի ՚ ՚ ծայնաստիճանից, քայլ նրան հաջորդում է այնպիսի խազանշան, որը նույնպես սկսվում է նույն աստիճանից. օրինակ՝ փուշ կամ շեշտ:

20 Դ. Աթայան, Հայկական խազային նոտագրությունը, Երևան, 1959, էջ 245:



Դարձվածքի միջում երկարին համապատասխանող քանակների փաստը
հայտնի է դառնում այլ կերպ ևս: Շարականների եռատուն հորինված-
քում երկրորդ և երրորդ տների թեմաները կամ կրկնում են տուաշինին,
կամ տարբերակում նույն նոր խոսքերի հետ համարվելու նպատակով:
Այն շարականներում, որտեղ տարբեր տների համապատասխան դարձվածք-
ները նույնանման են, սակայն նրանցից մեկում վանկերի թիւը մեկով
պակաս է մյուս տան մեջ՝ իրեն համապատասխանող դարձվածքի վանկերի
քանակից, ապա որևէ հարմար տեղում, երկար նշանի կիրառումով մե-
ղեղին լրացնում է այդ թերին, որպեսզի մեկ կուռությունը չխախտ-
վի: Նման իրադրության մեջ այն երկու վանկերը, որոնց փոխարեն
թերի դարձվածքում հանդես է գալիս երկարը, միշտ կրում են ՚ի և
ա ծայնաստիճանները հաջորդաբար:



7. Երկարի հակապատկերն է թուր խազանշանը, որի գծա-
գրության ընթացքը, ի տարբերություն երկարի, ոչ թե ներքն է իջ-
նում, այլ քարձրանում է վեր: Թուրը մեծ մասամբ հանդես է գալիս
դարձվածքի միջում, շատ սակալ՝ դարձվածքի սկզբում, իսկ վերջում
երբեք չի հանդիպում: Նույն շարականի տարբեր տներում զուգահեռ-
բար հանդես եկող նման դարձվածքներում թուր նշանին համապատասխա-

նում է երկու վանկ, որոնք համապատասխանաբար կրում են Յօ, ՀՅ
 կամ ԾԵ՝ ՀՆՀՅՈՒՆՆԵՐԸ: Այս հանգամանքից կարելի է հետևեցնել,
 թե թուրը օժաված է 2. տևողությամբ, որը կազմվում է 4 տևողու-
 թյուն ունեցող և միևնույն վանկին պատկանող երկու ՀՆՀՅՈՒՆՆԵՐԻ
 հաջորդականությունից: Քանի որ թուրը իր գծագրությամբ երկարի
 հակառակառիւն է, որը պատահական երևույթ չէ, ապա թուրի այս ար-
 ժեքները ավելի հայտնական են դառնում, որովհետև ՀՅ և Յօ քանա-
 ձեկերը երկարի Ճռ և Յօ Նշանակությունների հակադրծն են՝ սիմեո-
 րիայի Յ առանցքի նկատմամբ, իսկ ԾԵ -ն հանդես է գալիս՝ որպես
 հավելյալ քանաձև, որի նշանակությունը առնչվում է երկարի հետ
 այն առումով, որ նա Յօ -ի կրկնատեսակն է, և կիրառվում է մեկ
 աստիճան քարծր դիրքով: Թե թուրին համապատասխանող քանաձևերից
 որն է օգտագործիլում ալյալ դարձվածքում, իսկույն հայտնի է դա-
 նում նրա շուրջը գտնվող խազերի ընույթից և երգի ենթատեքստից:
 Բայց խազային տերսոր ավելի արտահայտիչ դարձնելու նպատակով
 միջնադարյան խազագետները հորինել են թուրի տարատեսակը՝ կետա-
 վոր թուրը 1, որը ցույց է տալիս 4 տևողությամբ C ճայնաս-
 տիճանը: Կետավոր թուրը իր ֆունկցիոնալ նպատակով համասեն է կե-
 տավոր փուշին, որովհետև C ճայնաստիճանը համապատասխանում է
 նրան ևս, մի տարբերությամբ, որ այդպիսի փուշի դեպքում 2 տևո-
 ղությունը կիսովի քաշակում է երկու հարակից վանկերի վրա: Թու-
 րի Յօ և ԾԵ քանաձևերում համայն օգտագործվում է ձ նախահարու-
 կը, և -ի շեշտվածքը ավելի ցայտուն դարձնելու համար:

Երկու տեսակի թուրերի համար, նրանց առջևում գտնվող ազատ
 վանկի վրա որպես նախդիր հանդես է գալիս Յ ՀՆՀՅՈՒՆՆԵՐԸ, որը աս-
 տիճանական ելքով նախապարագատում է թուրի քարծրադիր աստիճանը:






Կետավոր խազատեսակների գրառումը միջնադարյան գրիշների կողմից կատարվել է փոքր-ինչ անփութորեն, որովհետև շատ հաճախ, նույն շարականում, երբ խազային հաջորդականությունների ընթացքը միատեսակ է տարբեր տներում, ապա նշանը մի տեղում ներկայացված է կետավոր դրությամբ, իսկ մյուս, համապատասխան տեղում՝ առանց լիետի: Այս հանգամանքը չի կարելի ընդունել որպես տարբերակում կետ ունեղող և չունեցող խազերի դրությամբ, որովհետև մի ուրիշ ժեռագրում, նույն ստեղծագործության մեջ կիրառված խազատեսակը քոլոր տների մեջ հետևողականորեն ներկայանում է կետավոր: Թեև միևնույն է, նման մանր կարգի թերագրությունները էական դեր չեն խաղում խազերի միարժեք ընթերցման մեջ, որովհետև այն քազում հիմնական դույժները, որոնց միջոցով ստացվում է խազերի վերծանության մշգրիտ պատասխանը, խիստ որոշակի են:

8. Առաջին ձայնեղանակի դարձվածքները հաճախ սկսվում է սուր խազանշանով, որը երբեք չի հանդիպում դարձվածքի միջում կամ վերջում: Միջնադարյան քերականները սուրը ընդհանրացնում են շեշտի հետ, սակայն այն պարագան, որ խազերում սուրը և շեշտը հայտնվում են միևնույն ստեղծագործության մեջ, ենթադրով է, որ շեշտադրական ֆունկցիա ունենալով հանդերձ, նրանք խոնդրը կատարում են տարբեր եղանակներով: Գրվածքի տաղաշափության ուսումնասիրությունից հետևում է, որ սուր նշանին նույնպես պատկանում է.² ₄ տևողություն, որը հասուն չէ շեշտադրության խազերից ոչ մեկին: Իրար նման դարձվածքներում սուրի փոխարեն հանդե

եկող վշադարձ և քութ նազերը, որոնցով կազմված *f-a* հաջորդպահ-նությունը, ամենայն՝ հավանականությամբ սուր նշանի քանաձնն է: Քերական մեկնիչների միկայությունը, թե նուրը շեշտադրություն է գույց տալիս, հիմնավորակես քաշահայտվում է *f-a* քանաձնի միջոցով, որովհետև շեշտի, փշի և վշադարձի կողմից կատարվող շեշտադրական քանաձնները կամ ոլորակային են, կամ, նրա շեշտված մասնիկն են նշում ըստ մաժոր ոլորտի, իսկ *f-a* քանաձնը լադային հիմքի միջոցով շեշտում է ժայնեղանակային գլխավոր ֆունկցիոնալ կիենտրոնը՝ դիմող ձայնը՝ *a* -ն, խնդիրը կատարելով հեղղագիծ և արմատականորեն որոշակի ռանապարհով: Խազային վերծանություններում սուր նշանի *f-a* քանաձնի կիրառությունը լիովին համապատասխանում է աճ-ի լադային տրամախոհության քնույթին և ներդաշնակորեն միանյուսվում է նրան հաջորդող խազերի նշանակությանը, սաեղծելով մեկ իմաստալի շարահյուսություն:



9. Աճ շարականներում մեծ կիրառություն ունի զարկ՝ խազանշանը, որի պատկերը ստացվել է քութ և փուշ նշանների համակառությունից: Այս հանգամանքը արդեն ցույց է տալիս, որ զարկի ինտոնացիոն նշանակությունը կապված է քութի և փուշի համակցության հետ: Զարկը՝ հանդես է գալիս դարձվածքի միջում, երբեմն՝ սկզբում, իսկ ավելի հաճախ՝ դարձվածքի նվազակերպին վանկի վրա, որին հաջորդում են քութը կամ երկարը: Զարկին նախորդող և հաջորդող խազերի քացանայտ նշանակությունները և տիյալ խազախմբի մեաքանական կառուցվածքը պարզորոշ ցույց են տալիս թե տարբեր իրադրություններում ինչպիսի արժեքներ են յուրահատուկ այս խազանշանին: Օրինակ, դարձվածքի վերջին երեք վանկերում՝ փուշ, զարկ և քութ հա-

ջորդականության մեջ փուշի Յ և քութի Ա ֆունկցիաները կարող են կապակցվել և հանգածել ստեղծել միայն Ճ-ԳԻՅ ժայնաստի-ժանների միջանկյալ փոխանցիկությամբ, այլապես դարձվածքի հանգա-վորումը ոչ, մի ճնով չի լուծվի: Այս պատճառով է, որ նման իրադրության մեջ, սովորաբար փուշին հաջորդում են երկու ազատ վանկ՝ Ա և Ճ-Յ աստիճանները տեղափորելու համար, իսկ երբ ազատ վանկերի թիվը լինում է ընդամենը մեկ հատ, միջանկյալ հնչյունների գումարումով հանդիս է գալիս զարկը:



Նույնն է իրադրությունը նաև քութ, փուշ և երկար խազային հաջորդականության դեպքում, երբ այս երեք խազի համար անհրաժեշտ առնիւզն երեք վանկի փոխարեն, գրվածքում հատկացվում են ընդամենը երկու վանկ: Այս դեպքում ևս խնդիրը լուծվում է զարկի միջոցով, որը միաժամանակ հանդիս է գալիս թե քութի և թե փուշի փոխարեն:



Բութի արժեքը Ա է, թե Ճ-Յ, որը համապատասխանաբար նույնանում է զարկի քանածեկի առաջին անդամի հետ, կախված է խազի հոլովման իրադրությունից, այսինքն աղերսիում է նախորդ նշանի քանա-ժեքի հետ միահյուսման ընթացքին:

Ուսումնասիրելով զարկի և նրան հարևանող նշանների արժեք-ների համարման օրինաշափությունները, կարելի է եզրակացնել, որ զարկ խազանշանի քացարձակ քանածւը ունի Ճ-Յ-Ճ-Յ լայնարձակ

տեսքը, սակայն միշտ հանդես է գալիս իր տրամադրության տակ զբանրվող շորս հնչյուններից որևէ երկուսի գուգորդումով, նայած թե նրան ինչ խազ է շաղկապկելու:



10. $\frac{2}{4}$ տևողությամբ է օժտված նաև պարույկ խազանշանը, որը ոլորակի տարատեսակն է թե ըստ արտաքին նշանակազմության ձեփի, և թե ներքին ֆունկցիոնալ բովանդակության: Ոլորակը և պարույկը հանդես են գալիս նույն C-Ձ քանածեռվ, մի տարբերությամբ, որ ոլորակը լինելով շեշտադրական քնույթի, գույց է տալիս այդ քանածենի միայն շեշտված հնչյունը՝ C -ն, ինչպես քերական մեկնիշներն են նշում. , , արդ՝ է ոլորակի վերացումն և ցուցումն ձայնի, , , իսկ պարույկը նույն քերականի վկայությամբ իր մեջ ներառնում է շեշտին հաջորդող վայրընթաց շարժումը նույնպես. , , և յերկողունց ծայրիցն՝ ի շեշտէ և ի քթէ, քաղկանայ պարոյկն, ոռպէս ի սեռյն և ի սպիտակէն՝ գոշն, ²¹:

Ի տարբերություն ոլորակի, որի քանածեն միայն մի դիրքով է հանդես գալիս, որովհետև նրա խնդիրն է միայն էոլական ոլորտի շեշտումը, պարույկի նշանակությունը կիրառվում է երկու տարատեսակով: Պարույկին հատուկ վայրընթաց եռյակը կենտրոնաձիգ հատկություն ունի, որի շնորհիվ նա հիմնավորում է եռյակի միջին ձայնաստիճանը: Աճ-ի կառուցվածքում նման եղանակով կարող են արմատանալ երկու գլխավոր ֆունկցիոնալ հանգույցները. գլխավոր քառալոր շորրորդ աստիճանը՝ Բ -ն՝ C-Ձ քանածեռվ, և ձայնեղանակի դիմող կամ վերջավորող ձայնը՝ Ձ -ն՝ Ե-Գ(Շ) քանածեռվ: Թե այս երկուսից որ. մեկով է հանդես գալիս պարույկը, դա իսկույն

²¹ Ծասյի նշեցի, նույնը, էջ 170:

Երևում է հաջորդ խազնշանից:



11. Պարույքի հեռ է աղերսվում քենկորմ  խազնշանը, որի տեսքը նույն պարույքն է, ներքեւից ավելացրած մի քութ: Քենկորմը ընդհանրապես օգտագործվում է քոլոր ձայներում և մեծ մասմբ հանդես է գալիս դարձման կամ թեմայի վերջում, լայնաշունչ և զարդուլորուն ելակէջով եզրափակելով այն: Աճ-ում քենկորմը հանդես է գալիս ընդամենը մի քանի շարականում, որի դիրքերին համապատասխան նշանակությունը բխել է պարույքի հիմքից, կոտորակելով վերջինիս C-Ձ քանածնը ժրպես ե-ս-թ-ա: Տաղերի, մեղեդիների և աշխարհիկ երգերի մեջ, նույն փոյուգիական հիմքում, համայնադիպում է քենկորմի քանածնի ա-ե-ա-ցից տարատեսակը, որը Աճ շարականներում չի օգտագործվում:



Ինչպես տեսանք $\frac{2}{4}$ տևողություն ունեցող խազերի կրկնակի տևողական չափը հայեցողական չե, որովհետև այն ընում է նրանց կողմից միաձուլվող երկու խազնշաններին հատուկ ինտոնացիոն և ոլթմական խնդիրների գուգորդումից:

12. Հնչյունների տևողության փոքրացումը սղման կամ կոտորման միջոցով կատարվում է սուղ  նշանի շնորհիվ: Այդ մասին նշել են քոլոր խազաբանները, և դա ակնհայտ է դառնում շարականների ոիթմական կառուցվածքը վերլուծելիս: Սուղը ինտոնացիոն նշանակություն չունի և նրա միջոցով կիսվում են նրան հարեանող մեկա-

կան խազերի կողմից հիմնված հնչյունների տևողությունները։ Սու-
ղի միջոցով սղվում են նաև այն հարկադրավան վանկերը, որոնք
ստեղծվում են „,թ, , ծայնավորի հավելուրդով։ օրինակ՝ շարական-
ներում ընդունված է աստված քառի եռավանկ տեսակը՝ աստրված տես-
քով, որի թ-ն սղվում է, երբ նրա վրա հայտնվում է սուղ նշան։



18. Ամեն մի ձայնեղանակ իր ֆունկցիոնալ կառուցվածքի ըն-
դերքում կրում՝ է ուղիներ, որոնց միջոցով ժայնեղանակը դուրս է
գալիս կանոնական ծավալումների ասպարեզից և ստեղծում հավելյալ
ինտոնացիոն ոլորտներ, որոնք ածանցումների միջոցով ժեռք են քե-
րում հիմնական ժայնեղանակի ինտոնացիոն կերպարների համարժեքնե-
րը։ Այս եղանակով մայր մեղեդին դուրս է քերքում կանոնական կեր-
պակ ստատիկ ոլորտից և ավելի կենսունակ ու շարժուն է դառնում,
իր հետ քերծելով հավելյալ արտահայտչականություն ու ներգործական
նոր հնարակորություններ։ Զայնեղանակի կառուցվածքում հիմնական
ժայնա-լադային ոլորտի փոփոխություններ, որն ստացվում է հնչյունա-
շարի ածանցման և նոր ֆունկցիոնալ աստիճանների հիմնավորման շնոր-
հիկ, կոչվում է զարտուղություն։ Մրա միջոցով ստեղծված նոր ո-
ռակի ժայնեղանակը, միջնադարյան եղանակը անվանել են
„,դարձիվածք, ,՝ հիմնական ժայնի դրությամբ։ օրինակ՝ ած դարձ-
վածք, ոճ դարձվածք և այլն։ Առաջին ժայնեղանակում ածանցումը
կառարկում է եռական ոլորտում, էռական քառալարի դիրքում, մա-
տոր քառալարի համատեղումից, որի արդյունքը **թ** ժայնաստիճանի
վերափոխումն է **հ** -ի։ Խազարության մեջ այս խնդիրը վերնախաղ
լազանշանն է կատարում **C-h** կամ **h-C** քանածերով, որին կա-
րող են նախորդել **α, β** կամ **C** հնչյունները, նայած թե նրա առ-

ջեվում ինչ խազ է դրված: Վերնախաղը մեծ մասամբ հանդիս է գալիս թեմայի վերջին մասում և նրա միջնորդ կտարվող գարտուղությամբ մեղեղին վերջավորում է ճայնը Ը աստիճանի վրա: Զարտուղության գործողությունից հետո մի շաբաթ հազեր հանդիս զալով: Նոր ուղղությում, իրենց հատուկ խնդիրը արմատագես նույնությամբ կտարելու նպատակով ի հայտ են զալիս նոր ժայնաստիճաններով: Օրինակ՝ երկար նշանը, որ ցույց է տալիս վերջավորող ճայնը, որը քուն առաջին ճայնեղանակում: Ը հնչյունով է արտահայտվում; առաջին ճայնը գարձաւերում ստեղծված նոր վերջավորող իրադրության մեջ գրալում է Ը ճայնաստիճանի: Կիսահանգի ա-ց(ի)-ա քանածեր ամ դարձվածքում օ-հ-չ տեսքը ունի և վերնախաղից հետո քութը նույնակես աշխատում է Ը աստիճանի դրությունը:


Այն դեպքում, եթե գրիածքում վերնախաղի և նրան հաջորդող վերջավորող ճայնի համար պահանջվող երկու վանկի փոխարեն մեկ վանկ է հատկացվում, վերնախաղը և երկարը հայտնիում են միայն յածանակած վածանցված դրությամբ և այդ վանկի վրա է կտարվում երկու խազերի Փունկցիոնալ էությունից թելադրվող կրկնակի գործողությունը:



Նույն հիմունքներով՝ վերնախաղի գծագրությունը որպես հայելուրդ, շատ համախ կցվում է այն հիմնախազերին, որոնք հանդիս են զալիս ածանցված դրությամբ, ինչպես օրինակ՝ և և այլն:

